ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 17

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի

ռեկտորատի 30.04. 2020թ. նիստի

Ռեկտորատի նիստը կայացավ հեռահար կապի միջոցով (ZOOM հավելվածով):
Նիստին ներկա էին ռեկտորատի 16 (տասնվեց) անդամից 14-ը (տասնչորս):
Նիստին մասնակցում էին՝

1. Ե. Սերոբյան՝ ռեկտորի ԺՊ
2. Կ. Պետրոսյան՝ ռեկտորատի քարտուղար, գիտական քարտուղար,
3. Ն. Ավետիսյան՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ
4. Գ. Նիկողոսյան՝ պրոռեկտոր-աշխատակազմի ղեկավարի ԺՊ
5. Ս. Շահպարոնյան՝ ռեկտորի խորհրդական
6. Հ. Մելքոնյան՝ արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն
7. Ա. Սարգսյան՝ գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն,
8. Թ. Խաչատրյան՝ գրադարան - ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և ՏՏ կենտրոնի տնօրեն,
9. Ա. Մկրտչյան՝ ռազմական ամբիոնի պետ,
10. Բ. Պողոսյան՝ բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկան
11. Թ. Մելիքյան՝ հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան,
12. Ռ. Մարդոյան՝ մանկավարժության ֆակուլտետի դեկան
13. Օ. Հովհաննիսյան՝ սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկան
14. Ա. Հովհաննիսյան՝ անձնակազմի կառավարման և իրավական ապահովման բաժնի պետ

ՕՐԱԿԱՐԳ

1. **2019-2020 ուստարվա բակալավրիատի առկա/հեռակա կրեդիտային կրթական ծրագրով սովորող ուսանողների պրակտիկաների մասին**

   Հաղ.՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ Ն. Ավետիսյան

2. **ՇՊՀ քոլեջում սովորող ուսանողների քննությունների վերահանձման հարցի մասին**

   Հաղ.՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ Ն. Ավետիսյան

3. **Ընթացիկ հարցեր**

1. ԼՍԵՑԻՆ՝

2019-2020 ուստարվա բակալավրիատի առկա/հեռակա կրեդիտային կրթական ծրագրով սովորող ուսանողների պրակտիկաների մասին

Տիկին Ավետիսյանը ներկայացրեց, որ դեկանների, ամբիոնի վարիչների հետ բազմաթիվ քննարկումների արդյունքում ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի առաջարկով բակալավրիատի առկա/հեռակա կրեդիտային կրթական ծրագրով սովորող ուսանողների պրակտիկան տեղափոխվում է սեպտեմբեր ամսին՝4-րդ կուրսերի պրակտիկաների հետ համատեղ, այսինքն 4շաբաթյա և 5 շաբաթյա պրակտիկիաները միասին կազմակերպել:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Հ. Մելքոնյանին հետաքրքրում էր, թե ուսանողների գնատատման վրա սա արդյոք չի՞ ազդի, քանի որ ուսումնական տարին այս կիսամյակով ավարտվում է:

Տիկին Ավետիսյանը պատասխանեց, որ չի ազդի, սա տեխնիկական հարց է և ուսանողների կրեդիտային բազայում լուծելի է:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Արտակարգ դրությամբ պայմանավորված 2019-2020 ուստարվա բակալավրիատի առկա/հեռակա կրեդիտային կրթական ծրագրով սովորող ուսանողների II կիսամյակի պրակտիկաների անցկացումը տեղափոխել 2020-2021 ուստարվա I կիսամյակ՝ սեպտեմբեր ամսին:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

Կողմ՝14, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

2. ԼՍԵՑԻՆ՝

ՇՊՀ քոլեջում սովորող ուսանողների քննությունների հանձման հարցի մասին

Տիկին Ավետիսյանը ներկայացրեց, որ ՇՊՀ քոլեջի 13 ուսանողների քննությունների հանձնման կազմակերպման նպատակով հանձնաժողով պետք է կազմվի և մշակվեն քննության ձևաչապերը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Քոլեջի ուսանողներին թույլատրել հանձնելու համապատասխան քննությունները:

Քոլեջի տնօրեն Կ, Այվազյանին հանձնարարել առաջիկա հինգ օրերի ընթացքում քննությունները կազմակերպելու նպատակով ներկայացնել հանձնաժողովի կազմը և քննությունների ձևաչափերը:

Քոլեջի ավարտական կուրսերում պրակտիկայի անցկացման համար կազմել առցանց խմբեր և կազմած աշխատանքները ներկայացնել գործնական աշխատանքերի ձևով, իսկ ոչ ավարտական կուրսերի մանկավարժական պրակտիկան տեղափոխել 2020-2021 ուստարվա I կիսամյակ՝ սեպտեմբեր ամսին:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

Կողմ՝14, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Ընթացիկ հարցեր

Պարոն Սերոբյանը ներկայացրեց, որ համավարակի տարածմամբ հանրապետությունում ստեղծված իրավիճակով պայմանավորված առաջարկում է, որ նախորդ տարիների ավարտական աշխատանքը և մագիստրոսական թեզը չպաշտպանած, ամփոփիչ ատեստավորման քննությունները չհանձնած կամ անբավարար ստացած շրջանավարտներին 2019-2020 ուստարում ամփոփիչ ատեստավորման քննությունների, ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի պաշտպանությունը վերահանձնելու (հանձնելու) թույլատրել՝ անվճար հիմունքմերով:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Նախորդ տարիների ավարտական աշխատանքը և մագիստրոսական թեզը չպաշտպանած, ամփոփիչ ատեստավորման քննությունները չհանձնած կամ անբավարար ստացած շրջանավարտներին 2019-2020 ուստարում ամփոփիչ

ատեստավորման քննությունները, ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի պաշտպանությունը թույլատրել վերահանձնելու՝ (հանձնելու) անվճար հիմունքմերով:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

Կողմ՝14, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Ընթացիկ հարցեր

Տիկին Ավետիսյանը ներկայացրեց, որ սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի մանկավարժություն և հոգեբանություն մասնագիտության հեռակա համակարգի շրջանավարտ Ջուլիետա Կարապետյանը, ով նախորդ տարի չի հաղթահարել ավարտական աշխատանքի պաշտպանությունը այս տարի նույնպես ղեկավարի ներկայացմամբ անպատրաստ է ավարտական աշխատանքը պաշտպանելու: Ջուլիետա Կարապետյանը պատճառաբանում է, որ ընտանեկան վիճակի պատճառով չի կարողացել ժամանակին համագործակցել ղեկավարի հետ:

Պարոն Սերոբյանն առաջարկեց, որ Ջուլիետա Կարապետյանին մինչև նախապաշտպանություն աշխատանքը վերանայելու հնարավորություն ընձեռել և հորդորեց ռեկտորատի անդամներին թույլատրելու նրան ավարտական աշխատանքի պաշտպանությանը՝ ղեկավարից ստանալով նախորդ տարվա թեմայի արդիականության մասին հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Ջուլիետա Կարապետյանին մինչև նախապաշտպանության ժամանակահատվածը աշխատանքը վերանայելու հնարավորություն ընձեռել և թույլատրել նրան ավարտական աշխատանքի պաշտպանությանը՝ ղեկավարից ստանալով նախորդ տարվա թեմայի արդիականության մասին նրա հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

Կողմ՝14, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Ռեկտորատի նախագահ՝ ռեկտորի ԺՊ	Ե. Սերոբյան
Ռեկտորատի քարտուղար, գիտական քարտուղար՝	Կ. Պետրոսյան
Պրոռեկտոր-աշխատակազմի ղեկավարի ԺՊ	Գ. Նիկողոսյան
ՈՒսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ	Ն. Ավետիսյան
Ռեկտորի խորհրդական՝	Ս. Շահպարոնյան
Ֆինանսատնտեսական վերլուծությունների, ծրագրավորման և հաշվապահական հաշվ. բաժնի վարիչ-գլխավոր հաշվապահ՝	Ռ. Քալաջյան
Արհեստակցական կազմակերպության նախագահ՝	Վ. Խաչատրյան
Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն՝	Ա. Սարգսյան
Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն՝	Հ. Մելքոնյան
Գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և SS կենտրոնի տնօրեն՝	Թ. Խաչատրյան

Բնագիտամաթեմատիկական
ֆակուլտետի դեկանի Բ. Պողոսյան

Հումանիտար գիտությունների և
արվեստի ֆակուլտետի դեկան՝ Թ. Մելիքյան

Մանկավարժության ֆակուլտետի
դեկան՝ Ռ. Մարդոյան

Սոցիալական գիտությունների և
իրավունքի ֆակուլտետի դեկան՝ Օ. Հովհաննիսյան

Ռազմական ամբիոնի պետ՝ Ա. Մկրտչյան

Անձն.կառ.և իրավ.ապահովման
բաժնի պետ՝ Ա. Հովհաննիսյան